## Արձանագրություն N 19/3-2

ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 28 փետրվարի 2019թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | | Պերճ Թումանյան |
| Անդամներ՝ | | Յուրի Վարդանյան |
| | | Արսեն Գյուլոյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | | Լիլիթ Վերմիշյան |

### 1. Գնանշման հարցման ընթացակարգի հայտեր ներկայացրած կազմակերպությունների մասին

(Պ. Թումանյան)

1.1 <<ՀԱԲԼԾԿ>> ՊՈԱԿ–ի համար անհրաժեշտ ախտորոշիչ նյութերի ձեռք բերման նպատակով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում հրապարակվել է ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման հրավերը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի փետրվարի 28-ը:

1.2 Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| | | |
|---|---|---|
| 1. | <<Մեդիսար>> ՍՊԸ | Ք. Երևան, Գետառի 4/9, հեռ.543078 |

### 2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտ պարունակող ծրարի բացման մասին

(Պ. Թումանյան)

2.1 Նշված կազմակերպության կողմից ներկայացված հայտի ծրարը կազմված է հրավերով սահմանված կարգով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

2.2 Մասնակցի կողմից ներկայացված ծրարում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

2.3 Մասնակցի կողմից ներկայացված ծրարում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը կազմված են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

### 3. Գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու հայտ պարունակող ծրարի գնահատման մասին

(Պ. Թումանյան)

3.1 ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցի կողմից առաջարկած գինը հետևյալն է.

| Չ/Հ | Անվանում | Կազմակերպությունը | |
|---|---|---|---|
| | | <<Մեդիսար>> ՍՊԸ | |
| | | Ընդհանուր գինը առանց ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ախտորոշիչ նյութեր /Հակասիֆիրախտային պրեցիպիտացնող շիճուկ/ | 4737500 | 5685000 |
| 2 | Ախտորոշիչ նյութեր /Սիբիրախտի ստանդարտ հակածին/ | 56666.67 | 68000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:**

3.2 ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներ (առաջին տեղ զբաղեցնող) ճանաչել՝ որպես հայտը բավարար գնահատած և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ՝

1-ին և 2-րդ չափաբաժինների մասով <<Մեդիսար>> ՍՊԸ-ը:

3.3 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ու առաջարկված ապրաքների ամբողջական նկարագիրը:

3.4 Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և ''ֆինանսական միջոցներ'' որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:**

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը

4.1 Հանձնաժողովը որոշեց ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ք. Երևան, Էրեբունի 12 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:**

Հանձնաժողովի
Նախագահ՝ Պ. Թումանյան

Անդամներ՝ Յու. Վարդանյան

Ա. Գյուրջյան

Հանձնաժողովի
քարտուղար՝ Լ. Վերմիշյան